Հաստատում եմ
Տնօրեն .....
..... 2023թ.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ
2023 -2024 ՈՒՍՏԱՐԻ

ՏՄԿԱ գծով տեղակալ

Է. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Եթե չես պլանավորում քայլերդ, ապա պլանավորում ես ձախողումդ:

Աշխատանքի բովանդակությունը	Պատաս խանատու անձ	Կատարման ժամկետ	Նշումներ կատարման մասին
<u>Կազմակերպչական հարցեր</u> 1.Նախորդ ուստարվա դասղեկական աշխատանքների արդյունքների ամփոփում, նոր ուստարվա աշխատանքների քննարկում:	ՏՄԿԱԳՏ, դասղեկներ	օգոստոս	
2. Անցկացնել դասղեկների խորհրդակցություն և օգնել դասղեկներին կազմելու դասղեկական աշխատանքների պլանները և ներկայացնել հաստատման: Պլանները կազմելիս առաջնորդվել ԿԳՄՍՆ ուղեցույցում պահանջվող կանոններով:	ՏՄԿԱԳՏ, տնօրեն, մանկավարժա-կան խորհուրդ	օգոստոս	
3. ԴԱԿ-ի տարեկան աշխատանքային պլանի համատեղ մշակում և հաստատում մանկավարժական խորրհրդում:	ՏՄԿԱԳՏ, մանկավարժա-կան խորհուրդ	օգոստոս	
4. Նախապատրաստել և անցկացնել ծնողական հաշվետու ընտրական ժողովներ: 5. Կատարել միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաների հաշվառում, հնարավորության սահմաններում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովել դասագրքերով և գրենական պիտույքներով: 6.Կազմել ուսուցիչների, աշակերտների հերթապահության և դասղեկի ժամերի անցկացման գրաֆիկը 7. Աշխատանք տանել ծնողների, դպրոցի շրջանավարտների, գործարար մարդկանց շրջանում, դպրոցում հոգաբարձուների խորհուրդը համլրելու և աշխատանքներն ավելի նպատակաուղղված դարձնելու նպատակով: Ձևավորել դասարանների աշակերտական խորհուրդները: 8.Կոմպլեկտավորել դպրոցի աշակերտական ինքնավարության դասարանային մարմինները և աշակերտական ինքնավարության գործադիր մարմինը՝ աշակերտական խորհուրդը:	ՏՄԿԱԳՏ, ԴԱԿ, դասղեկներ	սեպտեմբեր	

9.Մասնակցել ԿԱՊԿՈՒ երեխաների կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը, վերահսկել այդ երեխաների կրթության կազմակերպումը՝ ըստ պլաններում նշված ժամանակացույցի	ՏՄԿԱԳՏ, Դասղեկ, ԴԱԿ ԲՄ խումբ	Ուստարվա ընթացքում	
10.Համակարգել սովորողների սոցիալական հարմարման համար մշակված ծրագրերին մասնակից մասնագետների համատեղ գործունեությունը: 11. Ուցուցիչների հետ միասին տարվող ուսումնասիրությունների արդյունքների քննարկում ուսումնադաստիարակչական գործընթացի կարգավորման նպատակով:	ՏՄԿԱԳՏ, ուսուցիչներ	Ուստարվա ընթացքում	
<u>Դասղեկական աշխատանք</u> 1. Դասղեկներից պահանջել աշխատանքային պլանի հիմքում ամրագրել հետևյամ դրույթները. Ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ: Աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն. Նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և հպարտություն: Դաստիարակության հիմքում դնել միջնակարգ հանրակրթական դպրոցի շրջանավարտի նկարագրի պահանջները:	ՏՄԿԱԳՏ, դասղեկներ	սեպտեմբեր Ուստարվա ընթացքում	
2. Կատարել դասղեկի ժամերի լսումներ և խրախուսել լավագույն դասղեկի ժամերը: 3.Պահանջել դասղեկներից ուշադրության կենտրոնում պահել <<ԿԱՊԿՈՒ>> երեխաներին և ներգրավել միջոցառումներին:	ՏՄԿԱԳՏ, դասղեկներ	Ուստարվա ընթացքում	

4.Օգնել դասղեկներին՝ծնողական ժողովների կազմակերպման և անցկացման ժամանակ 5. Ուժեղացնել վերահսկողությունը դպրոցի ընդհանուր կարգապահական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: 6. Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ: 7. Աշխատանք երեխաների հատուկ մոտեցում պահանջող խմբերի հետ՝ - սոցիալապես անապահով, - ծնողազուրկ, - վարքի շեղում ունեցող, - շնորհալի: 8.Դասղեկական ժամերին խոսել աշակերտների իրավունքների և պարտականությունների մասին: 9. Դասալսումներ կատարել տարբեր առարկաներից: համագործակցել դասավանդող ուսուցիչների հետ: 10. Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը: 12.Ուսուցանել աշակերտներին արտակարգ իրավիճակների ժամանակ համապատասխան գործողություններ: 13. Յուրաքանչյուր դասարանում ստեղծել ծնողխորհուրդ բաղկացած 5հոգուց, ապահովել ծնողխորհրդի մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը: 14 Դասղեկների հետ միասին հայտարարել թեմատիկ շաբաթներ, -«Մասնագիտական կողմնորոշում» -«Բնապահպանություն և կայուն զարգացում» -«Մեդիագրագիտություն» -«Հանդուրժողականություն» -«Ինքնագնահատում» և այլ թեմաներ	ՏՄԿԱԳՏ, դասղեկներ, դասվարներ, ՏՄԿԱԳՏ, դասղեկներ, դասվարներ, զինղեկ ՏՄԿԱԳՏ,ԴԱԿ, դասղեկներ,	Սեպտեմբեր Ուստարվա ընթացքում	

<u>Աշխատանք ծնողների հետ</u> 1.Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ: -Ծնողների պարտականությունների իրազեկում: -Ծնողական խորհրդի ընտրություն: 2. Պլանավորել ծնողական խորհրդի աշխատանքները: 3. Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադասարանական դաստիարակչական աշխատանքներին:	ՏՄԿԱԳՏ, դասղեկներ,	Սեպտեմբեր	
4. Առանձնահատուկ նշանակություն տալ ծնողների հետ տարվող աշխատանքներին և այն կազմակերպել այնպես, որ ուսուցիչներն ու ծնողները միատեսակ վերաբերմունք ունենան դպրոցական աշխատանքների նկատմամբ: Ծնողների շրջանում աշխատանքները կազմակերպել այն հաշվով, որ դպրոց-ընտանիք կապը դառնա ավելի համագործակցված, ապահովելով ծնողների ակտիվ մասնակցությունը դպրոցական կյանքին: Այդ նպատակով կազմակերպել՝ • այցեր ծնողների հետ կարիքավոր, դժվար դասիարակվող և թույլ սովորող աշակերտների տները, կազմակերպել նյութական և բարոյական օգնություն կարիքավոր աշակերտներին: 5. Ծնողների հետ կազմակերպել զրույց դասախոսություններ՝ • <<Երեխան և աշխարհը >> • <<Օրագիրը ընտանիքի և դպրոցի կապի լավագույն միջոցն է >> • <<Վատ սովորություններն ու դրանց հետևանքները >> • <<Դեռահասի դաստիարակությունը ընտանիքում>> • Բջջային հեռախոսների ազդեցությունը երեխաների առողջության վրա • Զանգվածային լրատվամիջոցների ազդեցությունը դեռահասների հասունացման զարգացման վրա: • Բռնությունը դատապարտելի է • Թրաֆիքինգ	ՏՄԿԱԳՏ, դասղեկներ, դասվարներ, ԴԱԿ,	Ուստարվա ընթացքում	
6.Կազմակերպել դպրոցական ծնողական խորհրդի նիստեր:	ՏՄԿԱԳՏ, դասղեկներ,		

<u>Աշխատանք գրադարանի հետ</u> 1. Օգնել գրադարանավարին կազմելու և հաստատման ներկայացնելու տարեկան աշխատանքային պլանը: 2. Օգնել գադարանավարին ստեղծելու գրադարանի աշակերտական ակտիվ, նրանց միջոցով գրքերի հաշվառում և նորոգում կատարել: 3. Կազմակերպել միջոցառումներ նշանավորոր և հիշարժան տարելիցների վերաբերյալ: 4. Կատարել գրքերի քննարկումներ: 5. Լույս ընծայել պատի թերթեր, գրողների տարելիցներին նվիրված: 6.Համագործակցել դպրոցի ԱԽ հետ 7.Համագործակցել դպրոցի ԾԽ հետ: 8. Անցկացնել ընթերցանության մրցույթ տարրական դասարաններում:	ՏՄԿԱԳՏ, գրադարանավար, ՏՄԿԱԳՏ, ԴԱԿ գրադարանավար, ՏՄԿԱԳՏ, ԴԱԿ գրադարանավար, գարադարանի ակտիվ, աշ. խորհուրդ. ԾԽ, դասվարներ. դասղեկներ	սեպտեմբեր ուստարվա ընթացքում	
Սովորողների հետ դասատիարակչական աշխատանքների կազմակերպում			
1.Աշակերտներին հոգեբանորեն նոր պայմաններին նախապատրաստում 2. Աշխատանք տանել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ: 3.Հսկողություն իրականացնել սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ 4.Կազմակերպել սովորողների հանգիստն ու ժամանցը: 5. Դասարանական խորհուրդների ձևավորում	ՏՄԿԱԳՏ, ԴԱԿ ՏՄԿԱԳՏ, ԴԱԿ, դասղեկներ դասղեկներ	Սեպտեմբեր Ուստարվա ընթացքում Սեպտեմբեր	

6.Աշակերտական խորհրդի նախագահի ընտրություն: 7. Աշակերտական խորհրդի ժողով, ԱԽ մասնագիտական խմբերի ձևավորում: 8. ԱԽ աշխատանքների համատեղ պլանավորում և վերահսկում:	ՏՄԿԱԳՏ, ԴԱԿ,	Սեպտեմբեր	
9. Սովորողների ֆիզիկական դաստարակության բարելավման նպատակով կազմակերպել միջդասարանական միջոցառումներ՝ սպորտլանդիաներ:	Ֆիզկուլտուրայի ուսուցիչներ ՏՄԿԱԳՏ, ԴԱԿ, ԱԽ	Ուստարվա ընթացքում	
10. Իրավական դաստիարակության նպատակով աշակերտներին ծանոթացնել միջազգային կոնվենցիայով սահմանված «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր» և այլ փաստաթղթերի հետ:	Հասարակա-գիտության ուսուցիչ, ԴԱԿ,	Ուստարվա ընթացքում	
11. Պսակադրություն Անհայտ զինվորի, Արցախյան պատերազմներում հերոսաբար զոհվածների, Եղեռնի զոհերի հուշակոթողներին:	դասղեկներ ՏՄԿԱԳՏ, ԴԱԿ, ԱԽ	Տոնական և տարելիցի օրերին	
12. Կազմակերպել՝ - Միջոցառումներ, գիտաժողովներ, սեմինարներ, մեծարման երեկոներ, դաս-միջոցառումներ, ինտելեկտուալ խաղ-մրցույթներ, բանավեճեր: -Լույս ընծայել պատի թերթեր, պաստառներ, վահանակներ, ստեղծել տեսագրություններ, ալբոմներ, մեթոդական անկյուններ: 13Համակարգել դպրոցում ռազմա-հայրենասիրական դաստիարակության գործընթացը՝ -Հստակեցնել դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացի մեթոդները, ձևերն ու միջոցները -Բարձրացնել դպրոցականների ռազմա-հայրենասիրական դաստիարակության և նախազորակոչային պատրաստության խնդիրների լուծման մեթոդների, միջոցների ու ձևերի արդյունավետությունը:	ՏՄԿԱԳՏ, ԴԱԿ, ԱԽ, դասղեկներ	Ուստարվա ընթացքում	

-Կազմակերպել ճանաչողական էքսկուրսիաներ դեպի պատմական վայրեր և հուշարձաններ, պատրաստել լուսանկարներ, տեսահոլովակներ և այլն: -Այց՝ ՀՀ ԶՈՒ զորամասեր, մարտական փառքի վայրեր 14. Աջակցել հասարակական կամ միջազգային կազմակերպությունների կողմից դպրոցում անցկացվող միջոցառումների, դասընթացների և այլ աշխատանքների իրականացմանը:	ՏՄԿԱԳՏ, ԴԱԿ, ԱԽ, դասղեկներ Զինղեկ ՏՄԿԱԳՏ, ԴԱԿ	Ուստարվա ընթացքում Ուստարվա ընթացքում Ուստարվա ընթացքում	
Դպրոցում անցկացվող միջոցառումների վերլուծություն			
1.Նշել հետևյալ նշանավոր տարելիցների, հիշատակի և հիշարժան օրերը. • Գիտելիքի, գրի և դպրության օր • ՀՀ անկախության հռչակման օր, առաջին դասարանցիների երդման արարողություն • Պսակադրություն ի հիշատակ 44-օրյա պատերազմում զոհված հերոսների • Ուսուցչի օր • Աղքատության վերացման միջազգային օր • Երեխաների իրավունքների մասի ՄԱԿ-ի կոնվենցիայի ընդունման օր	տնօրենություն ԴԱԿ, ԱԽ, դասղեկներ տնօրինություն ԴԱԿ, ԱԽ, ԾԽ դասղեկներ, դասվարներ	01.09 21.09 27.09 05.10 17.10 18.11	

• Կանանց դեմ բռնությունների միջազգային օր • ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օր • Երկրաշարժի զոհերի հիշատակի օր • Ծննդյան տոներ և Ամանոր • Հայոց բանակի օր • Տյառն ընդառաջ • Գիրք նվիրելու օր • Սուրբ զատիկ • Կանանց միջազգային օր • Մայրության և գեղեցկության տոն • Եղեռնի զոհերի հիշատակի օր • ՀՀքաղաքացու օր • Այբբենարանի տոն • Հաղթանակի և խաղաղության տոն 2.Կազմակերպել միջդասարանային մրցույթներ ուսման առաջադիմությունն ու գիտակցական կարգապահությունը բարձրացնելու նպատակով: 3.<<Վերջին զանգ>> 9 դաս 4.<<Հրաժեշտ տարրական դպրոցին>> 4դաս. **Արվեստի և գրականության աչքի ընկնող գործիչների ծննդյան-մահվան տարելիցները**	տնօրինություն ԴԱԿ, ԱԽ, ԾԽ, դասղեկներ, դասվարներ 9դաս դասղեկներ 4 դաս. դասվարներ	25.11 01.12 07.12 Դեկտեմբեր 28.01 13.02 19.02 Ապրիլ 08.03 07.04 24.04 Ապրիլ Մայիս Մայիս Ուստարվա ընթացքում մայիս	

<u>ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ</u> 1. Յուրաքանչյուր ամսվա վերջին տնօրինության նիստում քննարկել սովորողների հաճախումների հարցը:	Տնօրեն, ՏՄԿԱԳՏ, ԴԱԿ, դասղեկներ		
2. Ստուգել դժվար առաջադիմող աշակերտների հետ տարվող աշխատանքները և աշակերտական օրագրերի վարման վիճակը:		մշտապես	
3.Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքները:			
4.Մասնակցել դասղեկի ժամերին , նպաստել երեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորմանը:	ՏՄԿԱԳՏ		
5. Ուսումնական խմբակների աշխատանքների վերահսկում և կիսամյակային հաշվետվության վերլուծություն:		մշտապես	
6. Կատարել անցանկալի վարք ցուցաբերող երեխաների հաշվառում և անցանկալի վարքի պատճառների ուսումնասիրություն , ինչպես նաև համապատասխան աշխատանքի պլանավորում:	ՏՄԿԱԳՏ, ԴԱԿ, դասղեկներ		